

նով ինչի հայկական սարսափներու մասին սուած յիշատակագիրը թրքական անդթու թիւներուն վերջ չի պիտի տան: Դիւանագրութիւնը պիտի հրատարակուի թուրքիոյ «ամբողջութենէն»:

Մակեդոնիոյ եւ Հին Սերպիոյ մէջ տեղի ունեցած խառնակութիւնները, թուրք ֆրանսական ընդհարումը եւ հայոց կրած հալածանքները գէպի այդ գարմանը կը մղեն:

«Թրքական օրհասը քաջքնու ճիգերը տեղի պիտի տան արագ եւ արագ րացի կերպով նոր ու կենսունակ քաղաքական միութիւններու ստեղծելուն թուրքիոյ փոխարէն»:

«Թուրքիոյ օրհասը քաջկուտիւ համար եղած ճիգերու փոխարէն պէտք է նոր ու կենսունակ քաղաքական միութիւններ ստեղծել» այն ժամանակ պիտի պարզուի թէ Արեւելեան հարցը ամենեւին սարսափելի չէ:

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՄՐ. ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ

7—8 ամիսներ առաջ վստահելի անձէ մը լսած էի որ, Վահան Շահրիման, և Լեւոն Սարգիսեան 1899ին մատնութիւն մը գործած են հետեւեալ կերպով:

Վերոյիշեալ գաղափարական պարոնները, թուրքերէն նամակ մը կը խմբագրեն ուղղուած տեղւոյս տաճիկ հիւպատոսին՝ որով թիւրք կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն, նոյն օրերը Պոլսէն մեկնելու պատրաստուող անձնաւորութեան մը վրայ: շեշտելով միանգամայն որ, եթէ հիւպատոսը չուտով նկատողութեան չառնէ՝ ի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍԿԱՆԱԼԻՆ

VII

Վահի նոր տեսակէտը Բերլինի գաշնագրութեան մասին ինձ բաւական մտածել տուեց: Ճշմարիտ, հայերս, ինչով էինք սպասուցել որ մենք ազատութեան արժանի ժողովուրդ ենք: Վերջին ուս թրքական պատերազմի ժամանակ, մեր ատելութիւնը գէպի թուրքերը միայն այն չափով արտայայտեցինք որ բաղմամբ կամաւոր տւինք ուս կառավարութեան կողմ կատուս, իսկ Տաճիկաստանում էլ ժողովուրդը մահմետական բռնակալից տանջված՝ հազարներով փախեց քրիստոնեա բռնակալի ոտքերին: Ոչ մէկ տեղ հայ ժողովուրդը չը մտածեց իր անկախութեան մասին, մի ամենազնկին փորձ անգամ չարաւ:

Բաւական ժամանակ էր որ Վահիին չէի տեսել: Նա էլ չէր գալիս ինձ մօտ: արդեօք յոյսը կտրել էր, թէ ուրիշ պատճառ կար: Վերջապէս մի երկկոյ կրկին եկաւ: Բաւական խոստում գէմքով:

րենց օսմանեան շահերը պաշտպանող առաջարկը, պիտի ստիպուին Պոլսոյ ոստիկանութեան իմացնել:

Նամակը կը շարադրէ Վահան Շահրիման, նամակատուքը կը ձգէ Լեւոն Սարգիսեան. նամակին ներքեւը կը ստորագրեն «երկու թիւրք հայրենասէրներ»:

Այսպէս խոստովանած է Լեւոն Սարգիսեան իր մէկ բարեկամին այսպէս նաև ես յաճեմ յիշեալ բարեկամէն:

Իդէալիստ յեղափոխականները «...» իրենց նպատակին կը հասնին... Ի պահանջէլ հարկին մանրամասնութիւնները, և յիշեալ նամակը գրելուն շարժառիթը հետաքրքիր երիտասարդութեան պարզել պարտքս է:

Մեր ազնիւ երիտասարդութեան, և Յեղ. կուսակցութիւններուն վրայ պարտք կը ծանրանայ, այս խնդրոյն մասին իրենց որոշ համոզումը գոյացնել յետոյ, անողք գտնուիլ գէպի մատնիչը, կամ զրպարաիչը. մանաւանդ Հնչ. կուսակցութեան վրայ, որուն վարիչ անդամներէն մին է այսօր Վահան Շահրիման:

Ազնիւ ընթերցող, մինչեւ ցարդ չի հրապարակեցի սոյն խնդիրը, սպասելով որ լաւ մը ուսումնասիրեմ, և ուրախ եմ այժմ, բաղձանքս իրագործուած տեսնելուս համար:

Վերջերս Բագարատ եղբարս, և ուրիշ կարեւոր անձեր Բարիզ, Շահրիմանէն բացատրութիւն կը պահանջեն մատնութեան խնդրոյն մասին: Շահրիման կը յայտ-

Բարեւելուց յետոյ սուս ու փուս նստեց: Ես նամակ էի գրում, պատասխանեցի բարեւին և խնդրեցի մի քիչ սպասի մինչեւ որ նամակս վերջացնեմ:

Նամակս վերջացրի ու դիմեցի նրան. — Ի՞նչի չէիր երեւում, Վահ: Ի՞նչ կայ այդպէս միտնած ես. ի՞նչ է պատահել այստեղ գտնվելը իմացվել է արդեօք, թէ կրկին անհամբերութիւնն է քեզ տանջում:

— Չէ. ոչ իմացել են և ոչ էլ անհամբերութիւնն է տանջում ինձ: Բաւական համբերութեան սովորցրիք այստեղ: Ուրիշ բան կայ. հասցա՞ որ այսու մէջ չուտ արեք: Գիտէի որ զլսիս մի փորձանք պէտք է գայ:

— Բայց ի՞նչ փորձանք է, ասա էլ ի՞նչ ես ծամծամում:

— Եկել եմ որ ասեմ. բայց չը ծիծաղես:

Ծիծաղելու ի՞նչ կայ. փորձանքի վերա մարդը չի ծիծաղի, կը տխրի:

— Չէ, այնպէս փորձանքներ կան որ ծիծաղելի են. մանաւանդ եթէ այդ փորձանքները ինձ նման մարդկանց գլխին են գալիս:

— Դէ, շուտ արա ասա. տեսնե՞ք ի՞նչ է այդ ծիծաղելի փորձանքը:

— Ես սիրահարված եմ. գժի նման դրա ճարը պէտք է տեսնել և դու ինձ պէտք է օգնես:

նէ այդպիսի գէպի մը գոյութեան ճիշդ ըլլալը, կուրանայ սակայն իր մեղակից գտնուիլը Լեւոն Սարգիսեանին հետ, և ըստ իր պատասխանատուութիւնը Սարգիսեանի վրայ կը ձգէ:

Ուրեմն սիրելի ընթերցող, այլևս պարզէ թէ, մատնութիւնը կատարուած է. սակայն մէկ հոգիով թէ երկու հոգիով, այս կէտը պիտի լուսարանեն անբաստանուողները:

ՎԱՀԱՆ ՄԱՋՄԱՆԵԱՆ
Ֆրիւրի 12 Հոկտ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Իրօ Արմէնիայի Պոլսոյ թըղթակիցը հետեւեալը կը հաղորդէ:

«Դուք ժամանակին հողորդեցիք Շէրիֆ աղայի սպանման և այդ պատճառով 30 հայերու ձերբակալման լուրը, որոնք գացրին Մուշի բանտերու մէջ միտնալու իրենց 150 հայրենակիցներուն հետ»:

Յունիսի մէջ, այդ գժբաղդներէն մին՝ Հասարթ անունով, տանջանքներէ մեռեր է. այդ թուականէն սկսեալ 7 բանտարկեալներ ալ մեռած են:

Իսկ գալով Մոկուք գիւղին, ան յուլիսի վերջերուն ենթարկուած է Մահմուտ Օսման, Սէլօ Յիւսէֆի, Մահմուտ Շիմաք և Մստօ քիւրտերու յարձակմամբ: Գիւղին գիւմարուց ուժերուն բացակայութեան պատճառով, որոնք

— Ինչպէս թէ սիրահարված ե՞ս, չէնք ո՞ր, այս մի քանի օրվայ մէջ սիրահարվեցիք:

— Չէ, տանն էինք տարի է որ սիրահարված եմ: Ես ոչ այստեղ. այլ մեր քաղաքում: Միշտ աշխատել եմ մոտանալ, բայց կրկին վերանորոգվել է:

Աշխատել եմ մոտանալ. որովհետեւ ինձ նման մարդին, «կատրճիկին» ո՞վ կարող է սիրել. չեմ հաստատեցի որ ինձ կարող է մի կին սիրել. թէև ես սիրում եմ, Բայց բանից դուրս է գալիս որ իմ սիրածը իսկապէս սիրելիս է եղել ինձ: Չը դիտեմ ումից իմացել է իմ այստեղ լինելը ու մի շաբաթ առաջ ինձ նամակ է գրում որ անպատճառ գնամ իրան տեսնեմ պատրաստ է ինձ հետ ամեն տեղ գնալ փախչել. որովհետեւ ծնողները չեն համաձայնի նրան ինձ կնութեան տալ:

Եւ ո՞ր քահանայն կը համարձակվի Սիրիականիս քաղաքական իրաւունքներից զրկվածիս պատելը: Հիմա եկել եմ քեզնից մի խելք հարցնեմ: Ասա, մի միջոց ցոյց տուր. ես էլ եմ ուզում երջանիկ լինել: Չէ ս՞ր սիրածի հետ ամուսնանալն էլ մի երջանակութիւն է:

— Բայց դու գործի էիր ուզում գնալ Վահի. կնոջդ ի՞նչ պէտք է անես. ենթադրենք որ փախցրիր նրան յաջողցրիր և մի կերպ ամուսնանալ, բայց ի՞նչպէս պէտք է սպրտե՞ք. նրան ի՞նչպէս պէտք է պահես:

— Գործի էի ուզում գնալ. կրկին

բանտ նետուած են Շէրիֆ աղայի սպանման առթիւ, այդ աւազակները ոչ մի գիմագրութեան չի հանդիպելով հրգեհնր են ամբողջ հունձքը և գիւղի ամբողջ բնակչութիւնը ցրուեր են:

Մուշի անցքերու մասին որոշ տեղեկութիւններ չի կան, բայց մենք հիմա կրնանք յալիսեան սպաննութիւններու և կոտորածներու մասին տեղեկութիւններ տալ:

Յուլիս 6—31 առհասարակ օրը ցերեկին, դաշաբու մէջ աշխատած միջոցնուն, հետեւեալ սպաննութիւնները կատարուեր են:

Արագի մէջ Ռէշիտ Գօթանզատէ, Մահմուտ և Տուրուս քուրտերը սպաննած են երեք եղբայրներ, Սարգիսը, Մրտէն և Մօսէն: Ալիտիլըուրի մէջ սպաննուեր է Աստուածատուրը. Աւզուտի մէջ երկու գիւղացիներ, Յրոնքի մէջ Արթին Եղօեան, Վարչիկի մէջ գեղի Ռէսը. Տօնէ, Մէզրէ և Ակչան գիւղերու մէջ Օհանէս և Վարդան Մկրտանները, երկուսն ալ ըէյիսներ:

Յուլիս 17ին Բաքրանցի երեք զինուած քուրտեր կը մտնան Պետրոսի կնիկ Պէզարին տունը, լաւ մը կուտեն և կսպանեն գինքը, իր 10 տարեկան աղջիկը և փոքրիկ տղան:

15 տունէ բաղկացած Տատուագոմ գիւղի վրա յուլիս 14ին առաջին անգամ կը յարձակին: Երկրորդ անգամին յուլիս 28ին կը յարձակին նոյն գիւղին վրայ, և գիւղին բէխիին՝ Մլքէի փորը պատուելով մէջը վառող կը լեցու-

կը գնամ. ո՞վ է ինձ խանգարում, նա էլ հետս կը գայ, կեանքը պէտք է լիովին ապրել, ես էլ մի քանի օր առաջ քեզ պէս էի մտածում. դրա համար էլ շտապեցնում էի: Դու չես իմանում թէ իմ սիրուհին ինձ համար ինչ նշանակութիւն ունի, նրանով էի ես սպրտում Սախալինի սառնամանիքներում, նրա յիշատակին էր ինձ պահպանում բանտերի և հանքերի մէջ:

Նրա կարօտն էր ինձ հայրենիք քաջում, նրա սէրն էր իմ մէջ ազնիւ զգացումները զարթեցնում և պահում: Դու չը գիտես թէ ինչ մեծ նշանակութիւն ունի ինձ նման օրէնքից հալածված և հասարակութիւնից առհամարված մարդի համար մի կոյս ու՛ աքուր անջկայ սէրը: Ինձ նման մարդին որով օրիորդը ոչ մի յետին միտք չի ունենայ. նա միայն և միայն սիրուց գրգված կը վճարի իր կեանքը ինձ նմանի հետ կապել:

Նա սիրել է ինձ մաքրիս կէսը ածիլված, սուքերս շղթայ. նա սիրում է ինձ հիմա, փախտասկանիս:

Միթէ երջանակութիւն չ'է այդ ինձ համար: Ի՞նչ օրէնքի հիման վրա ես ինձ զրկեմ այդ երջանակութիւնից, մերժեմ նրա սէրը մանուսանդ որ իմ սէրն էլ նրան պէտք է երջանակցի. իսկ մերժումը դժբախտ պէտք է դարձնի:

(Շարունակելի)

նեն և կր պայթեցնեն. քարտե-
րը կը տանին 100 ոչխար, 70 եզ
և 160 կով.

Յետոյ թղթակիցը կը նկարա-
գրէ Մարտիկ գիւղին մէջ տեղի
ուենցած սպանութիւնները և
կաւելցնէ:

Գիւղին բոլոր բնակիչները ցը-
րուած են և թշուառ վիճակի
մէջ կը թափառին գրացի գիւ-
ղերու մէջ:

Եւ այսպէս ոչ միայն Մուշի ու
Սասունի մէջ, այլ և ամէն տեղ
ուր հայ կայ:

Կիլիկիոյ մէջ, Տէրսիմ և Թուրք
ուսական սահմանազխին վրայ:

ԼԱԻ Է ՈՒՇ, ՔԱՆ ԵՐԲԷՔ

—o—

Պկած այն օրէն երբ Արշակ
Չօպանեան հրապարակաւ իր կա-
պերը խզեց Արփիաշին հետ,
Անահիտը բոլորովին կերպարա-
նափոխուեցաւ:

Իսկ Անահիտին վերջին հա-
մարը արդէն եկաւ մեզ յայտա-
բարելու որ Չօպանեան անձամբ
մեծ փոփոխութեան ենթարկուած
է, ոչ ու է կողմակի ազդեցու-
թեան մը տակ, այլ տրամաբա-
նօրէն:

Կարգացէք Անահիտի մէջ «Գր-
քեր եւ թերթեր» յօդուածը,
այդ տեղ ձեզի կը ներկայանայ
նոր Չօպանեանը. ներքնապէս
յեղաշրջուած, բարեփոխուած Չօ-
պանեանը:

Սակայն այդ յօդուածին մէջ
մեզի հաճելի են աւելի յօդուա-
ծին գրեթէ վերջին այս սողերը:

«Մեր յեղափոխական գործու-
նէութեան քննադատումիս մէջ
գործածեցի ոճ մը զոր պէտք չէր
գործածէի, ես կարգ մը իրական
սխալներու հետ սխալ համարե-
ցայ բաներ ալ որոնք սխալ չեն
թուի որ այժմս ինծի: Ատոնց մէջ
ես էի սխալողը, չեմ վարանիր
խոստովանիլ»:

«Շարժումը շարունակ ամենա-
բուն կերպով մատնանիշը ը-
րած է Չօպանեանի սխալները,
և երբեմն ալ գուցէ չափէն աւելի
խստութեամբ, բայց այսօր յու-
սով եմ որ ինծի թող պիտի տը-
րուի որ իրականութեամբ մատնանիշ
ընել Պ. Չօպանեանի այդ անկեղծ
խոստովանութիւնը: Անկեղծ կը-
սեմ, որովհետեւ այդպիսի հրա-
պարակային յայտարարութեան
մը մէջ առայժմ կասկածելու ի-
րաւունքը չունիմ, և կարծեմ ոչ
ոք ալ չունի:

Չօպանեանի այդ տողերը մեզի
իրաւունք կուտան կարծելու որ
ան յամառ մարդ չէ, ընդունակ
է իր սխալները ըմբռնել և ա-
րիւթիւթիւնը ունի հրապարակաւ
խոստովանելու իր սխալած ըլ-
լալը:

Յտիկա գրաւական մըն է որ
Չօպանեան օր մը իր միւս հրա-
պարակագրական պակասութիւն-
ներէն ալ պիտի ազատի, և շատ
ուրախ պիտի ըլլանք որ այդպէս
ըլլայ: Անահիտը այն ժամանակ
միայն պիտի կրնայ գեր կատա-
րիլ և օգտակար հանդիսանալ,
երբ անոր զիկավարը լաւ մը և
լայնօրէն հասկնայ մեր ժողո-
վորդին համար օգտակար պա-
հանջները ու ըստ այնմ շարագրէ
իր յօդուածները:

Կը մաղթենք որ Չօպանեան իր
«նոր ուղիին» մէջ, որ բոլորովին
կը տարբերի Ձէյթունի
նախկին հերոսի «նոր ուղիէն», և
Չօպանեանի հին ուղիէն, աւելի
որոշ քայլերով առաջ ընթանայ:

ԿԷՏ

«ՉԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՉԱՅՈՑ ՉԱՐՅԸ»

Մեծ ժողովածու Յրանստեան լեզուով,
մէս 1000 երեսից, պատկերազարդ,
մասնակցութեամբ նշանաւոր երոպա-
ցիներէ հրատարակուելու «Երոպայի
Հայ Ուսանողական Միութեան»
(ժախֆ որոշուած է 45-20 հազար ֆր.)

Ծ Ր Ա Գ Ի Ր

—o—

1. Ծանուցում Եւրոպայի
Հայ Ուսանողական Միութեան:
2. Ընդհանուր առաջաբան
3. Կոչեր նշանաւոր եւրո-
պացիների, յօգուտ հայերի և
հայոց հարցի լուծման:
4. Ակնարկ հայոց պատմու-
թեան. Ա. Հայերի գերը նախա-
քրիստոնէական և քրիստոնէական
շրջանում. Բ. Հայերի կուրը
քաղաքական հարեւանների հետ.
Գ. Կրօն-եկեղեցի. Դ. Հայկական
իրաւունքը:
5. Հայաստանի աշխարհագ-
րութիւնը. Ա. Քաղաքական
(հին և այժմեան). Բ. Կարագ-
րական. Գ. Հայերի թիւը (ու-
սումնասիրութիւն). Դ. Գրացի
ազգեր:
6. Կղզագրութիւն. — Հնախո
սութիւն (հայկական բեւեռա-
գրեր. Հայկական գեղարեստ
ճարտարագիտութիւն):
7. Հայոց գրականութիւնը.
Էջու. Ա. Հին մատենագրու-
թիւն. Բ. Նոր գրականութիւն.
Գ. Կովկասեան և թիւքասոյցի
մամուլի պատմութիւն:
8. Արեւելեան հար նր
պատմական տեսութիւն:
9. «Հայոց հարցը». Ա. Ի
րի քաղաքական շարժումը ի-
ջիպում. Բ. Թիւրքահայերի
անտեսական կեանքը. Գ. 1850
1900 (պատմական քննադատու-
թիւն). Դ. Ապստամբութեան շըր-
ջանը. յեղափոխութեան գլխա-
ւոր մօժէնտներ (պատմական սկ-

նարկ). Ե. Կոտորածներ. Զ. Հա-
յոց հարցը եւրոպական դիպլոմա-
տիայի առաջ. Ա. Պարիզի կօնգ-
րէս. Բ. Սան-Ստէֆանօ, Գ. Բէր-
լինի կօնգրէս. Դ. 1895ի ծրա-
գիր. Ե. Պաշտօնական ակտեր.
Զ. Թիւրք կառավարութեան վե-
րաբերմունքը դէպի հայկական
գաղութ (թանգիմաթ—Խատթընէ-
րիֆ, Խաթթըն Հիւսայուն և այլ
կարգադրութիւններ):

10. Եւրոպացիների կարծիք-
ները. Ա. Գրողներ. Բ. Պետա-
կան գործողներ. Գ. Միսիօնար-
ներ. Դ. Ճանապարհորդներ. Ե.
Նորագոյն հայասէրներ (քաղ-
ւածքներ):

11. Հայերը Ռուսաստանում.
Նրանց կատարած գերը 19րդ.
դարու սկզբում. Զինւորական-
ներ:

12. Կովկասեան հայերը:

13. Ակնարկ Պարսկաստանի
հայերի մասին:

14. Հայ գաղութներ. (Բալ-
կան, Եգիպտոս, Ամերիկա,
Հնդկաստան, Լեհաստան):

15. Կենսագրական (նշանաւոր
հայերի եւ հայասէր եւրոպացի-
ների):

16. Թիւրքաց լծից ուղտա-
գրւած երկիրներ (Աղատութեան
պատմութիւն—Յունաստան, Բուլ-
գարիա, Բուլմանիա, Սերբիա,
Կրետէ):

17. Տեսարաններ. նկարներ,
Լուսանկարներ. Հայաստանի
քարտէզ:

18. Հայերի ապագայ գերը
Փոքր Ասիայում:

ԼԻԱՉՈՐ ԿՕՄԻՏԷ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի նպաստ երկուք որբախնամ ընկ.
հայոց վառնայի
—(o)—

Պատիւ ունինք յայտարարելու
թէ. հայ գերաստնական ՎԷՍԷԼՈ
խումբը ըստ իր խոստման բոլոր-
ովին անձնուիրաբար ի նպաստ
ընկերութեանս, յառաջիկայ հինգ-
շաբթի հօկտ. 25ին պիտի ներ-
կայացնէ խնամքով պատրաստ-
ուած «Ներկու Յիւնապետներ»
բարոյակցի թատերախաղը՝ խիստ
ծիծաղաշարժ երկու վարագոյր
զուգընթաց մը: Եւ լքօսարանա-
պետ Տ. Տիրբան Թիւֆէնքճեան
նոյն գիշեր թատերասրահը ձրի-
աբար որբախնամիս որոմագրե-
լի ըրած է: Ուստի Գործ. ժողովս
կուզայ հրապարակաւ շնորհակա-
լութիւն յայտնելու պատ. ՎԷՍԷԼՈ
խումբին և Տ. Թիւֆէնքճեանին:
Վստահ ենք և լիայնս Տ. պատ.
ազգայինք երբ Գործ. ժողովս ի-
րենց ներկայացնէ ներկայացման
գիրամատչելի տոմսակները ա-
մենայն սիրով և յօժարութեամբ
պիտի մասնակցին սոյն նուիրա-

կան և բարձր ձեռնարկին անգամ
մը ևս ցոյց տալով հրենց պար-
տաճանաշուքիւն. և գիտնալով
որ, ներկայացման հատկութիւն
տի յատկացուի ընկերութեանս
անունով Հայաստանի հայ որբա-
նոցնաց մէջ խնամաւելիք որբե-
րու ուսման կրթութեան և ար-
հեստագիտութեան և թերեւս
նոր որբերու որդեգրման, այն
նօթի և թշուառ որբերուն՝ ու-
րոնք ապագայ սերունդ և հայու-
թիւն պիտի կազմեն:

Մնամք յարգանօք
Ի գիմաց Գործ ժողով
(Կնիթ)

Ն Ա Մ Ս Կ Ա Տ Ո Ւ Փ

—(o)—

Յիլիպէ, «Հնչակեան մը». —
Ձեր նամակը չի տպագրուեցաւ,
որովհետեւ գուք այդպիսի ամ-
բաստանով նամակի մը տակ չէք
ուզեր ձեր ստորագրութիւնն դր-
ուի: Խմբագրութիւնն միայն այն
թղթակցութիւնները առանց իս-
կական ստորագրութեան կը դնէ
որոնց հեղինակները անձամբ
լաւ կը ճանչնայ: Մի մոռցէք որ
այն անձը, որուն դէմ գրած էք,
իր իսկական ստորագրութեամբ
մէջտեղ ելած է:

—Քօնստանձա, Բարեւ. ընկե-
րութեան վարչութիւն. — Ձեր
գրկած գումարը ստացանք 17 ֆր.
60 սնթ. և 6 ֆրանքը յանձնեցինք
տէրերուն:

—Բարիդ. Մ ձեր նամակը ժամա-
նակին ընդունուած է, Ձեզ ոչ ոք
այդ ստոր պաշտօնը չէ յանձնած
մանաւանդ Վարդօ, որովհետեւ
ձեր Բարիդ գացած միջոցին
Շարժումի խմբագիրները ուրիշ-
ները էին: Կրնաք ապահով ըլլալ
Մեր վկայութեան վրայ
Բարիդ Տձեր նամակն ալ ընդու-
նուած է. ամենեւին համաձրիա
չենք ձեր նամակի բովանդակու-
թեան: Կը զարմանանք որ ա-
տանկ խնդիրները բացարձակ
կերպով չէք շօշափեր. ուրիշ-
ներու ձեռքով կուզէք կրակ վեր-
ցնել:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

Հայգիւրբգում հիմնել է մի գրա-
դարան, որ նպատակ է գրել ծանօթա-
ցընել արտասահմանի հայ ուսանո-
ղութեան եւ ընդհանրապէս հետաքր-
քուող անձանց հայոց ներկայ կեան-
քին վերաբերեալ հայերէն եւ օտար
լեզուով լոյս տեսած գրքերի հետ:
Գրագրանք ունի յիշեալ նպատակով
հրատարակած գրքերի մի համեմատ
որի համար յայտնում ենք նուիրա-
սու անձանց մեր խորին շնորհակա-
լութիւնը եւ խնդրում ենք այն
անձանց հատուտութիւններին,
որոնք կամենում են գրքերով և
նւիրատուութիւններով օգնել գրա-
դարանին, բարեհաճին ուղարկել
հետեւեալ հասցեով:

ՇA. Iohannessian Heidelberg Kaiser 31
№ 5

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Տէյլը Թնկէկ. անգլիական թերթը կը հաղորդէ որ անգլիական կառավարութիւնը համաձայնած է ֆրանս-աուսական առաջարկութեան՝ Թուրքիոյ վրայ ճնշում գործ դնելու Պերլինի գաշնագրով խոստացուած բարենորոգումները գործադրելու համար:

Նոյն թերթը իբր գործնական նախ միջոց կառաջարկէ Տարտանելը և Բոսֆորը ամէն պետութեանց նաւատորմիներուն առջեւ բանուլ. որով քանի մը մեծ զրահաւորներ Երևալըին պատերին առջեւ երեսնալուն և քանի մը ուսմը նետելուն պէս իրկոյն կատարել պիտի տան Եւրոպայի պահանջները:

— Ելեմայից նախարարը իր ընկերներուն առաջարկած է անհրաժեշտ փոխառութիւններ ընել, որովհետեւ երկրին ելեմայական վիճակը շատ գէշ է: Իարձր Գուռը մտադիր է Սուլթանէն իրատէ խնդրել:

— Եանեայէ կը հեռագրեն որ այնտեղի վախին ձերբակալեր է չորս թուրք պէյեր և յայտնի Իւսուֆ փաշան: Ասոնք կառավարութեան դէմ քարոզելու մէջ կը մեղադրուին:

— Սուլթանի անուանական եւ Բաիֆ փաշայի իսկական նախագահութեամբ յանձնախումբ մը կազմուեր է ելեմայից նախարարութեան վիճակը քննելու համար:

— Արթին փաշայի յուզարկաւորութեան հանդէսը կատարուեր է մեծ շքով: Օտար պետութեանց ներկայացուցիչներ ներկայ գրտնուեր են հանդէսին:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Շանկայէ Թայմիլի կը հաղորդեն հետեւեալը:

Կայսրը հարցուցած է հարաւային Չինաստանի փոխարքային, որ ըողոքած էր Մանչուրիոյ վերաբերեալ գաշնագրութեան դէմ, թէ ինք ի՞նչ միջոցներ կառաջարկէ Ռուսիոյ գիմադրելու համար և արդեօք կը հաւատա՞յ թէ կարելի է վստահիլ Անգլիոյ և Ճաբոնի աջակցութեան վրայ:

Լի—Հունկ—Չանկ և Իչխան Յինք որոշեր են երկրին ներսը ճամբորդել ուղղը օտարականներուն աղքարարել որ ասոնք իրենց ճամբորդութեան մասին նախօրոք իմաց տան Չին կառավարութեան, որպէսզի ան ճամբորդները ապահովիչ միջոցներ ձեռք առնէ:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Թուրքիոյ կրկին հիւանդացի է և այս անգամ աւելի ծանր կերպով: Հիւանդ է նաեւ նշանաւոր գրագէտ Մաքսիմ Կորկի, որ ուսանողական խնամքով խնամուած պատճառով աքտորված էր: Կառավարութիւնը Կորկիի արտօնած է Ղրիմէ երթալ:

Ա Ն Գ Լ Ի Ա

Ռէտովէրս Պըլլըր զօրավարը որ թրանսվալի պատերազմին սկիւրները անգլիական զօրաց զլխաւոր հրամանատարն էր և վերջը ուրիշ պաշտօն մը ստացաւ, նորերս իր արտօնածնած մէկ ճառին համար պաշտօնանկ եղած է:

Սակայն անգլիական հասարակութեան համակրութիւնը Պըլլըրի կողմն է և զայն էնտրիգանտու զոհ կը համարէ: Պըլլըր շատ համակրական նամակներ կընդունի:

— Լորտ Սալլպրի Լօնտօն վերադարձեր է Էտուարտ Թագաւորին փափաքին վրայ: Թագաւորը կուզէ որ թրանսվալի պատերազմը աւարտի իր թագաբորութեան հանդէսէն առաջ: Այդ նպատակով խորհրդակցած է նախարարապետին հետ:

Հ Ո Ւ Ն Գ Ա Ր Ի Ա

Ընդդիմադիրներու բուռն պայքարներու հետեւանքով Հունգարիոյ խորհրդարանը լուծուեր է:

Ի Տ Ա Լ Ի Ա

Պապը հիւանդ է: Վատիկանը Զինական կառավարութեան հետ բանակցութեան սկսեր է Բէքիինի մէջ ներկայացուցիչ մը ունենալու համար:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Ս. Հեղինէի կղզիէն կը հաղորդեն թէ հոն գտնուած Պօէր գերիները բարոյապէս շատ դժբաղդ են:

Անոնք ոչ մի լուր կառնեն. գրաքննիչը խոտորէն կը քննէ անոնց հասցէին եկած նամակները, մանաւանդ անոնք որ կը վերաբերին Հարաւային Աֆրիկէին: Անոնք իրենց զաւակներուն և կիներուն մասին ամենեւին տեղեկութիւն չեն առներ: Բոլորովին յուսահատուած են:

— Իօհանէսպուրկի բանտ, բանակէն հասած լուրերը շատ գէշ կը նկարագրեն պօէրներուն վի-

ճակը: Թշուառութիւնը որուն մէջ ընկղմուած են պօէրուհիները և երեխաները հետզհետէ աւելի կը սաստկանայ: Մահուան դէպքերը կրկնապատկուած են, մանաւանդ երեխաներու մէջ: Հասած օգնութիւնը շատ չնչին է:

Ա Յ Ղ Ա Ն Ի Ս Տ Ա Ն

Բեթերսպուրկէն կը հաղորդեն հետեւեալը:

Կոմս Լամստորֆ պետութեան մը ներկայացուցիչն յայտարարած է որ Աֆլանխտանի վեհապետին փոփոխութիւնը պիտի անցնի առանց անկարգութիւններու ու Ռուսիոյ և Անգլիոյ միջամտութեան պէտքը չը պիտի ըլլայ:

Լամստորֆ նաեւ աւելցուցած է թէ՛ անմտութիւն է կործնել որ Ռուսիա Հնդկաստանը գրաւելու ծրագիրը յաւիտենապէս կը փայփայէ:

Ռուսիա հաստատապէս խաղաղ քաղաքականութեան մը կը հետեւի:


Պ Ա Ր Ս Վ Ա Ս Տ Ա Ն

Շահի կեանքին դէմ եղած դաւադրութիւն մը երեւան եկեր է: Դաւադրութեան գլուխները եղած են շահին երկու եղբայրները, փեսանոր առաջին վէզիրն է: Երկու եղբայրները ցը կեանս բերդարգելութեան գատապարտուած են իսկ փեսան մահուան, սակայն կառափնատի վրայ բարձր միջոցին շահը հրամայեր է չը բացած կախել, գաւազանաւ զարնել մինչեւ որ բոլոր դատադիրներուն անունը տայ:

Կը կարծուի որ յեզափոխական ամբողջ կուսակցութիւնը և հոգեւորականութիւնը մասնակից են այդ դաւադրութեան:

Թ Ա Տ Ր Ո Ն Ս Ա Ն Թ Ր Ա Լ

— (Ո) —



Հայ Դեր. խումբը առաջնորդութեամբ Ա. Պէնլեւսի վաղը հինգշաբթի գիշեր մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ:

Ա Ր Թ Ի Ս Տ

Կամ

ԿԱՐՄԻՐ ԳԻՆԵՏԱՆ ՈՃԻՐԸ

Թատերախաղ 4 արար:

Նոր եկող իտալական երգչիկ խումբին կ'ըմանէ երգեր եւ պարեր:

Խիստ ծիծաղաշարժ

Կաւեչա 1 արար

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԿՇԱՐԺՈՒՄ ԿԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցեատոմս, նամակազուլս, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ:

Գիները յոյժ գլխաւատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻՅ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով: Իւնիօն Տէ Զ'իյիւսիսն Արմ. Լիօռոք իւլ զը Լիֆօլ զը Ծիֆի 2

Սուխ Ժընէվ Կարգոյիլ Զանձնաւորոյլ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Յ Գ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

Նոր Ընթերցարան (պատկերազարդ) Առաջին տարի (Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած) Դին 70 Սնթ.

Կը ծախուի վառնայ Մ. Կարակճեանի քով:

Ս Ձ Դ

Բաղէչի կուսակալութեան պատկանեալ Յուրդափ գլուղէն Պէկօ Ասատուրեանի, հաստատակալմ շէկ պէխով ու յօնքբով, 6 ամիսէն ի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը քննիթարել հաճին, անոր ուր գտնուիլ խմբագրութեանս հաղորդելով:

Ա Ձ Դ

Սիլիոգրէի ուղղային արական վարժարանի համար կուզուի վրկայեալ ուսուցիչ մը որ կարող ըլլայ աւանդելու հայերէնէ ու ֆրանսերէնէ զատ նաեւ երկրորդական գիտելիքներ, փափաքողը բանակցութեան համար թող բարեհաճին դիմել տեղւոյն աղգային վարժարանին հոգաբարձութեան:

Отговорникъ:

Мурадъ Ераносянъ

Печ. Взаимность — Варна